

Աւելարն եղիսկոպոսը, Մանչէստրը մայր եկեղեցու տւագերէցը, 80-ամեայ մի առոյդ եղիսկոպոս է, յայտնի հասարակական զործիչ և տարբիներով պայքարել է հայկական դատի օգտին:

Արքակ Սահերութեան
«Հորիզոն»

Յ Թ Ա Ն Ս Ի Ա Ց Ի Ն Ե Ր Ի Կ Ո Զ Ը Հ Ր Ի Կ .
Ն Գ Ա Ա Տ Ե Լ Ո Ւ Հ Ա Մ Ա Ր .

Փարիզարնակ անուանի ֆրանսիացիներ իրենց ստորագրութեամբ հետևեալ կոչը ուղղած են բոլոր ֆրանսիացիներին, թշուա հայերին օգնութեան համելու համար.—

«Յայտնի է, որ հայերը որոշ ծրագրի մը համեմատ կը կատորուին թիւրք կառավարութեան հրամանով, որ Սակտիւլ Համբիւրի ձեռնորկը կը շարունակէ անզթութեան տևելի վարպետ ձեւերով։

Երկու հարիւր յիսուն հազարէն աւելի հայեր, որոնց մէջ իրիստ շատ որրեր կան, մահէն խռափելու համար ստիպուեցան Ռուսիա զաղթել։ Անոնք այսօր ծանրացած են կովկասի հայերին վրայ և հակառակ ուս իշխանութիւնների բարի կամեցաղութեան, իրենց վիճակը շատ խախուտ է։ Օրուկան հարիւրաւորներ կը մեռնին։

Վերջապէս բանի մահէն կը փախչին թշուառութեան և քաղցի երեսէն դանդաղ կերպով մեռնելու համար միայն։

Արդէն Անդրիայի մէջ կազմուած է մարմին մը, օգնութիւն զրկելու համար զաղթական հայերին։ Ֆրանսիան շիրճար անտարբեր մնալ. ան. ալ պիտի ապացուցանէ անզամ մը ևս իր աւանդական առատաձեռնութիւնը, խելոյն օգնութեան համելով հալածուած ժողովրդի մը դժբաղդ վերասպրողներին։

Պիտի ջանանք նոյնալէս օգնութիւն հարցնել անոնց,

որ Թիւրքիայէն դուրս ելնել չկրնալով հանդերձ խուսափած են մէթոտիկ բնաջնջումէ մը ք.

Այս կոչը ստորագրուած է հետևեալներէն.

Անարու Ժրան, Վիեղու Պետա, Յէրտինան Պիոիսոն, Ժ. Գլէմանո, Յէրտինան Հերօյ, Կիւստու Երվէ, ծերակուտական ս'էքոււնիլ որ Գոնսզան, Ժրանսական Գոյէնի պրօֆէսէօ Ա. Մէյյէ, Փարիզի բաղամապետական խունդի նախազան Արժիեն Մինուառ, Տիկին Մէնար Տորիան, Եւեսփոխաններ՝ Մարտէ Գառէն, Ա. Կալի, Ժրանիլին-Պույեօն, Ժան Լրոյ, Ժօրժ Լէյէ, Ժան Լոնիէ, Մարիու Մողէ, Ժազ Փիու եւ այլն:

(«Արմենիա»)

— — — — —

ՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Վանի շրջանի Յուլիսեան մեծ դադթի ժամանակ մեծ շափով վնասուել են վանքերի և եկեղեցիների թանգին եկեղեցական անօթները, իրերն և ձեռագրերը, որոնցից շատերը ենթարկուել են մութ սննդանց ձեռքով թալանի և ոչնչացման, իւր ժամանակին վեհափառ Կաթուղիկոսի կողմից կարգադրութիւն է եղել կարեոր իրերը և ձեռագրերը փոխադրել ո. էջմիածին, և այդպէս էլ արուած է — ձեռագրերի և իրեղէնների որոշ մասը վանքերից և եկեղեցիներից փոխադրուած են արդէն ո. էջմիածին, որոնց ցուցակը կը հրատարակուի «Արարատ»ում:

Միւս կողմից Պետրոգրադի Շեմարանն ևս կարգադրել է ազատել այդ հնութիւնները պատահական կորսուից և այդ նպատակով ուղարկել է Կովկասեան պատերազմաբեմը և յատկապէս Վանի շրջանը պ. Ամբատ Տէր Աւտիսեանին որոշ հրահանգներով:

Պրն. Տէր Աւտիսեանը այդ առթիւ գրում է Վեհափառի Դիւնապետին հետևեալը: «Դիւնութեան Շեմարանի որոշ-